Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Պ-1370-17.06.2026,01.07.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 05-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 57-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը սույն օրենսգրքի Հատուկ մասով կարող է նախատեսվել որպես պարտադիր լրացուցիչ պատիժ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասը «հնարավոր չի համարում անձի կողմից հետագա ժամանակահատվածում որոշակի պաշտոններ զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը,» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքի, երբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված է որպես պարտադիր լրացուցիչ պատիժ» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 218-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ զրկելով պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 219-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ զրկելով պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 220-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ զրկելով պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 05-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 57-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը սույն օրենսգրքի Հատուկ մասով կարող է նախատեսվել որպես պարտադիր լրացուցիչ պատիժ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասը «հնարավոր չի համարում անձի կողմից հետագա ժամանակահատվածում որոշակի պաշտոններ զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը,» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքի, երբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված է որպես պարտադիր լրացուցիչ պատիժ» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 218-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ զրկելով ~~**հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն**~~ **պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն** զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով ~~**հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն**~~ **պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն** զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 219-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով ~~հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն~~ **պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն** զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ զրկելով ~~հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն~~ **պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն** զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 220-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ զրկելով ~~հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն~~ **պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն** զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով ~~հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն~~ **պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն** զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով ~~հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն~~ **պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն** զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1370-17.06.2026,01.07.2026-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյան	Նախագծի 3-6-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի 3-6-րդ հոդվածներում «հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն» բառերը փոխարինել «պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն» բառերով	Ընդունվել է	**Ընդունվել է**
2.	Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյան	Նախագիծ	Առաջարկվում է նախագիծը լրացնել ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», ««Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը	Ընդունվել է	**Ընդունվել է**